

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

Վ. Մ. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ

Հրապարակայնությունը տասնամյակների կամայականության, սարսափի ու լուռության պաշտամունքային կապանքներից ազատել է ժողովրդի նաև պատմական հիշողությունը: Վերանայվում, վերագնահատվում են մշակույթի հին ու նոր արժեքները, վերադարձվում են պատմության շղթայից հանված օղակները, նորովի ու ճշմարիտ գնահատական է տրվում ժողովրդի հոգևոր ժառանգության դերին ու կարևորությանը, այն մեծ անցյալին, առանց որի մարդկությունը ապրել չէր կարող: Բնավ չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ նաև հայ գրականության պատմությունն էր Մաշտոցից, Նարեկացուց մինչև Սևակ, վերքերի մեջ, որոնք նա ստացել էր ոչ միայն օտարներին, այլև օտարացած «յուրայիններից»: Հայ մշակույթի վերքերը դեռևս չեն սպիացել: Ծիշտ է նկատված, որ դրանք լուսվածք կամ կիսաճշմարտության մեջ բուռն անհնար է: Անհրաժեշտ է հիմքից արմատախիլ անել այն ամենը, ինչ դավաճանություն է եղել առաջադիմության նկատմամբ, ինչ խայտառակություն է բերել դարաշրջանին, մեթոդիկ անարդարության մարդկային կտրել է իր դարավոր անցյալից, դժվարին դարձնելով նրա ոչ միայն ներկայի, այլև ապագայի ուղին: Մենք արդեն հասել էինք հիշողությունը կորցնելու ճակատագրական սահմանագծին, երբ մեր աչքերը տրորեց հրապարակայնության ու բացախոսության լուսը և կարողացանք տեսնել ու գիտակցել, թե ինչ է կատարվել մեզ հետ, որտեղից և ինչպես ենք եկել, ինչ ենք ստեղծել, ինչ կորուստներ ունեցել, ուր ենք հասել և ինչպիսին պետք է լինի մեր անցնելիք ճանապարհը ոչ թե առանց անցյալի, այլ նրա հետ: Դա բնավ էլ դուրին գործ չէ, որովհետև խոշտանգվել, աքսորվել կամ գաղափարապես մեկուսացվել էին ոչ միայն մարդիկ, այլև մտածելու նրանց իրավունքը:

Որքան էլ տարիմաստ, բայց պատմության փորձով ստուգված օրինաչափություն է. հանցագործը սովորաբար ավելի շուտ է զգում դատապարտող ճշմարտության մոտեցումը, փորձելով երկու ուժ տեսնել ժամանակի մեջ՝ ստոր ու ազնիվ. ըստ որում, ինչ ստոր է, նա համեստորեն վերագրում է ժամանակին, իսկ ազնիվը՝ իրեն: Բայց առհասարակ վատ ժամանակ չկա, կան միայն վատ մարդիկ: Եթե հաղթանակեր ժամանակի՝ ամեն ինչում և մշտապես մեղավորության տեսությունը, ապա հավերժորեն անպատիժ կմնային աշխարհի բոլոր դահիճներն ու հանցագործները, ամենուր կհալածվեր բարին, և կկործանվեր մարդկությունը: Դեռևս ավելի քան կես դար առաջ էր Սիլվիո Զարենցը կանխատեսել ժամանակը փրկության հովանի դարձնելու վտանգավորությունը: Ժամանակը ծնվել է ոչ թե մարդկանց մեղքերը իր վրա վերցնելու, այլ բոլորին «մուհրակ տալու համար», որի հատուցման աստիճանը ճշտում են միայն ապագա սերունդները: Ժշտում... Եվ շատերը սնանկ են հռչակվում: Մեր խոսքը այդպիսի մի խորշիկի անհատի մասին է լինելու, որը վաղուց է դուրս եկել սովորական «ես»-ի շրջանակներից, անձնական, նեղիկ ինքնությունից, գաղափարական ավերիչ մտայնության մարմնացում դարձել և կոչվում է ոսկերչականության: «Գրական թերթեր» (21. IV. 1989) հրապարակել է Արտաշես Ոսկերչյանի՝ «Իսկ ճշմարտությունը սա է» ակամա, բայց անսքող ինքնամեղացումը: Չէ՞ որ քննադատը, ուրիշի մասին գրելով, գրում է նաև իր մասին, արտահայտում իր հոգում կուտակածը: Վերջիվերջո «դրանով նա ինքը իր դատաստանն է տեսնում և իր գրածի համար ինքն է պատասխանատու պատմության առաջ» (Դերենիկ Դեմիրճյան, «Գրական թերթ», 9. II. 1959) մեծանուն ճշմարտախոսը քաջ գիտակցում էր, որ դեռևս քիչ է պատասխանատու լինելու պայմանը, պետք

է նաև պատասխանատվության կանչող լինի: Դժբախտաբար այս երկրորդը շատ է ուշանում, մի ուշացում, որ քիչ դառնություններ չի պատճառել նաև Դեմիրճյանին: Թերթի նույն համարում տպագրված ակադեմիկոս էդ. Ջրբաշյանի «Նամակ խմբագրությանը» հոդվածում նորից ու դարձյալ (որովհետև առաջին անգամը չէ) իրեն հատուկ բանիմացությամբ ու բարեխղճությամբ բոլոր նկատար կետերը դրված են Ոսկերչյանի բազմամյա դեմագոգիայի, շարամիտ գրպարտությունների ու կեղծիքների վրա: Որքան էլ դառն լինի, բայց պիտի վկայենք, որ զրպարտությունն էլ տոհմածառ ունի, որը բարոյական իրավունք է տվել Ջրբաշյանին և թերթի խմբագրությանը շնորհացնել Ոսկերչյանի աղբատիմացության սահմանները, անդրադառնալ ոչ միայն նիկոլ Աղբալյանի կյանքին ու գործին, նրա գրական հարուստ ժառանգության նորովի ու ճշմարիտ վերագնահատմանը, նրա ճակատագրի ողբերգականությանը, այլև Ոսկերչյանի՝ հիսնամյա ճանապարհ անցած և նոր զոհեր պահանջող քաղաքական, քրեական մեղադրանքներին, հետագարձ հայացքի տակ առնելով այդ ճանապարհի և՛ աչք, և՛ ձախ կողմերը, մեկը մյուսից ամոթալի, մեկը մյուսից սանձարձակ, իսկ երկուսը միասին՝ մաղձոտ ու դատապարտելի և՛ սկզբում, և՛ շարունակության մեջ, և՛ վերջում:

Ոսկերչյանը իր հերթական «զգոնությունը» դարձյալ ավարտում է հետևյալ «ողնացույց» սպառնալիքով: Պետք է հիշել, որ «հնարավոր չի հեղափոխական վերակառուցումը առանց քայքայիչ գաղափարների դեմ հետևողական պայքարի»: Ասել է, թե իր զրպարտությունը նա դեռ շարունակելու է: Հետևաբար ճշմարիտ է էդ. Ջրբաշյանի անհանգստությունը. «Մի՞թե իրոք, չկա նրա գործած բարոյական չարիքներին վերջ դնելու որևէ միջոց և մինչև ե՞րբ պետք է շարունակություն ունենա Ոսկերչյանը»: Փոքրիկ մի ճշտում. ոչ թե Ոսկերչյանը, այլ ոսկերչյանականությունը, որն, ինչպես երևում է, իր տիրոջից ավելի երկար ապրելու միտում ունի:

Դեռևս երեսուն տարի առաջ այդ նույն «Գրական թերթը» ծավալուն հոդվածով, և հատուկ խմբագրականով մերկացրել է Ոսկերչյանի հակագիտական դատումները՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների, նազարյանի, ԲաճՖու, Պատկանյանի, Արծրունու, Աղայանի, Հովհաննիսյանի, Շանթի և այլ գրողների ու հասարակական գործիչների մասին: Երևանի պետական համալսարանի մեծ գիտխորհուրդը, ձայների գերակշռող մեծամասնությամբ, մերժել է Ոսկերչյանի դոկտորական դիսերտացիան («Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները»), դրանով իսկ պաշտպանելով հայ գրականագիտության՝ դասականների ժառանգության զնահատման լենինյան սկզբունքները: Եվ քանի որ Ոսկերչյանը երբեք որևէ հաջողություն չի ունեցել, չէր կարող ճշմարիտ դասեր առնել նաև պարտությունից: Վերջապես, չորս տարի առաջ (1985) Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության և գրականության ինստիտուտների գիտխորհուրդների միացյալ նիստում քննարկվել և դատապարտվել է Ոսկերչյանի քաղաքական ծավալուն «նամակը», որտեղ տասնյակ գիտնականներ, մամուլի օրգաններ ու հիմնարկներ մեղադրված են նացիոնալիզմի, ռևիզիոնիզմի, հակահեղափոխականության մեջ: Մեջբերում ենք համատեղ նիստի որոշման վերջին կետը. «Առտ. Ոսկերչյանը տասնամյակներ շարունակ զբաղվել և շարունակում է զբաղվել խորհրդանշյալ գրականության և մշակութային լավագույն ներկայացուցիչների վարկաբեկման, անաբեկման ու հալածանքի գործով: Դեռևս 30-ական թվականների սկզբից նա գրպարտական գործունեություն է ծավալել Ե. Չառենցի, Ա. Բալասնցի, Վ. Թաթևեցի և մյուսների նկատմամբ, հետագայում էլ Ոսկերչյանը շարունակել է վարկաբեկել խորհրդանշյալ, մշակութային շատ ազնիվ գործիչների (այդ թվում Պ. Սևակին, Հր. Մաթևոսյանին և բազմաթիվ գրականագետների ու պատմաբանների)»:

Ոսկերչյանը շանսաց նաև վաթսուն գիտնականների այդ՝ թեև խիստ, բայց ճշմարիտ քննադատական ձայնին, չցանկացավ հրաժարվել իր տխուր անցյալից, որ վնասակար է նաև այսօր:

Եվ ահա նորից (կարծում եմ, վերջին անգամ) նա մոտեցավ «Գրական թերթի» ամբիոնին, այս անգամ հրապարակայնության քողի տակ: Արժե հի-

շեցնել, որ անհատի պաշտամունքի և լճացման տարիների հրապարակայնության իրավունքից շուրջընկերներն օգտվել են միայն կեղծիքն ու զրպարտությունը, մատնությունն ու քաղաքական մեղադրանքները: Հոգևոր ու մտավոր այդ արատներին ոչ արգելք կար, ոչ էլ պատիժ, կեղծիքը դատում, ճշմարտությունը դատապարտվում էր: Ոսկերչյանը, ահա, այդ պաշտամունքային հրապարակայնության ծնունդ է:

Ձինական իմաստությունն ասում է, թե մարդ կարող է սխալվել միայն մինչև վաթսուն տարեկանը, որից հետո դալիս են սխալներն ուղղելու և նոր սխալներ չգործելու դժվարին ժամանակները: Ոսկերչյանի գաղափարական ծոռությունը շտկելու տարիքային բոլոր ժամկետները վաղուց են անցել: Ուստի մնում է միայն պատասխանել այն հարցին, թե ինչու նա չի կարողանում ստուգել իր անցած ճանապարհի ինչպիսին լինելը: Ձէ՞ որ հատկապես ինքնազննումը, ինքնամաքումը իր իսկ անհատից սկսելու՝ մեր օրերում յուրաքանչյուր մարդու բարոյական պարտականությունն է հաշվետու լինել իր իզճի առաջ և հրաժարվել այն տհաճ բեռից, որ խանգարում է ազնվորեն կատարելու քաղաքացիական իր պարտքն ու պարտականությունը: Ինչու՞, կրկնում եմ, որովհետև կեղծիքից, նենգափոխությունից, մտքի քաղաքական անկարգությունից և ամեն ինչ շուռ տալու վայրենի կրքից հրաժարվելու համար առաքինություն է պետք, կայուն գիտելիքներ, իրեն և ուրիշին ճիշտ հասկանալու կարողություն: Այդ ամենից նա զուրկ է:

«Լինում են դեպքեր, երբ առանձին ճնշված երկրների ազգային շարժումը ընդհարվում է պրոլետարիատի զարգացման շահերի հետ» (Ի. Ստալին): Ավելի քան կես դար առաջ, երբ մոլեգնում էին անհատի դահճային կամայականությունները և հալածանքները հայ մշակույթի մեռած և ապրող երախտավորների նկատմամբ, հրապարակ հանվեց այս գաղափարական դեղատոմսը: Արտաշես Ոսկերչյանը իր «Հակահեղափոխական, տրոցկիստական, նացիոնալիստական սոցիոսկոմունիստների դեմ պատմության ասպարեզում» հոդվածում («Նորհայտի գրականություն», 1937, № 4, էջ 146) գրում է. «Ստալինի այդ հանճարեղ գնահատականից հետո տարակույս չի կարող լինել այն բանում, որ հայերի ազգային շարժումը 70—80-ական թվականներին օժանդակեց Բեռլինում, Երևանում և Կապուտում եր ցարիզմի և վաճառական քաղաքականության հաղթանակին: Նույն հոդվածում լիբերալ-բուրժուական ազգայնական մտավորականության ներկայացուցիչներ են համարվել Ստ. Նազարյանը, Ռ. Պատկանյանը, Բաֆֆին և Արծրունին, մի գնահատական, որին համոզվում ենք Ոսկերչյանի նստե՝ «Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները» գրքում (1962 թ.): Ավելորդ չի լինի հիշել, որ 1936 թ. Ոսկերչյանի հոդվածից մեկ տարի առաջ լույս էր տեսել և ավերիչ հրահանգի ուժ ստացել ԽՍՀՄ-ում Կոմունիստական կուլը՝ «Փոշիացնել, հողմացրիվ անել սոցիալիզմի թշնամիներին», որտեղ ուղղակի նշված է, թե ինչը և ում պետք է փոշիացնել: Հայաստանում ուղում են ստեղծել ձևով ազգային, բովանդակությամբ ազգայնական մշակույթ, պետք է պայքարել «ազգային իղձեր» նացիոնալիստական արտահայտության դեմ: Ի դեպ, հենց այդ օրերին լույս տեսած «Հայ գրականության պատմություն» 2-րդ հատորում հայ ժողովրդի ազգային իղձերի արտահայտիչներ էին կոչված Ստ. Նազարյանը, Սմբ. Շահադիզը, Բաֆֆին և Արծրունին: Բայց այդ ի՞նչ ազգային իղձերի մասին էր, որ ենթակա էին փոշիացման: «Բաֆֆու, Արծրունու և Գամառ-Քաթիպայի իղձն էր, — գրել է Ալ. Մյասնիկյանը, — տեսնել հայկական վիլայեթները ազատված Տաճկաստանից և միացած Ռուսաստանին, հանուն որի Արծրունին չվարանց հայերին նույնիսկ հեղափոխական կռիվ հրավիրել: Լեռնային հրաժարվելով կամ փարիսեցիաբար ընդունելով ազգային-աղատագրական շարժումներին տված լեռնային ճշմարիտ գնահատականը, որոշ մարդիկ և, առաջին հերթին, Ոսկերչյանը, ստալինյան «լինում են դեպքերից» ընտրեցին հենց հայկական ազատագրական շարժումները, փորձ անգամ շանելով, թե որտեղ և ինչ պրոլետարիատի

զարգացման շահերի մասին է խոսքը և այդպիսիք կային արդյոք Արևմտյան Հայաստանում 1870—80-ական թթ. և հետագա տարիներին: Մի՞թե թուրքական պրոլետարիատի շահերին դեմ էին հայկական շարժումները: Միայն գաղափարների աշխարհում անպտուղ մարզանքներ կատարելու դեպքում է հնարավոր այդպիսի շարաններ անհեթեթությունը, որի համաձայն ինչ հեղափոխական չէ, ազգայնական է, ուրեմն նաև մերժելի: Ասում են հայերի, ինչպես և մյուս ժողովուրդների, ազատագրության եփշտ ռադիկալ նշել է միայն մարքսիզմ-լենինիզմը, բայց անխղճորեն մոռանում են, թե մինչև այդ մեծ հեղափոխությանը հասնելը հայ ժողովուրդը էլ ի՞նչ ազատությունների համար է դարավոր պայքար մղել օտար նվաճողների դեմ՝ իր հայրենիքը փրկելու, իր գոյությունը պահպանելու համար: Ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը մարքսիզմի ոչ թե հայտնաբերումը, այլ այդ պայքարի պատմական դերի ճշմարիտ գիտակցումն ու գնահատումն է: Ոսկերչյանի համար մտորսիզմը ոչ թե ֆիտակալ աշխարհայացք է, այլ առշին, որի հեղափոխական շահումին ոչ մի ուրիշ պայքար քննություն չի բռնում՝ մերժվում կամ թերագնահատվում է: Այդպիսի շահումը դաժնալից է կոչվում, այն էլ ոչ թե սովորական, այլ գոեմիկ: Ոսկերչյանը, սովորաբար, խուսափում է դիմել այս կամ այն հրապարակախոսի, գրողի կոնկրետ ասույթներին՝ գեղարվեստական երկերի վերլուծությանը, հիմնավորելու համար, թե ինչու է այս մեկը ազգայնական, այն մեկը՝ հետադիմական, երրորդը՝ տրոցկիստական, կամ հայկական շարժումներն ում դեմ էին ուղղված և ինչու է դրանց գաղափարախոսների ատելությունը «գոռոգիական նախդրերով» կոչվում, այն էլ իշխող: Ավելին, Ոսկերչյանը գտնում է, որ չի կարելի իրեն ոչ միայն հակադրվել, այլև առարկել անգամ, որովհետև... հենվելով Շահումյանի, Սյանդարյանի ժառանգության վրա, ինքը ոչ միայն հաստատել է (SIC) նրանց տրագիցիաները, այլև առանձին դեպքերում ու առանձին հարցերում զարգացրել այն ու նոր հետևությունների ու եզրահանգումների հասել: Հետևաբար, ով փորձում է ցույց տալ Ոսկերչյանի սխալները, նա «ձեռք է մեկնում հայ մարքսիստական բոլշևիկյան քննադատությանը (չի հասկանում, որ ձեռք մեկնելը դրական իմաստ ունի. երևի ցանկացել է ասել ձեռք է բարձրացնում—Վ. Մ.), փորձելով վարկաբեկել ու նսեմացնել նրա գաղափարական ու էսթետիկական նշանակությունը: Հետևությունը մշտապես միանշանակ է, այդպիսի «ձեռք մեկնելը» ռեզիդուանի թշնամական բնույթ ունի»²:

Բայց նախ դառնանք այդ «առանձին դեպքերից», «առանձին հարցերից» մեկին՝ ամենակարևորին, որը համարյա կես դար է, ինչ աղավաղելով շարաշահում է Ոսկերչյանը: «Սուրենը պատկանում է հայ ծագում ունեցող այն նոր գաղափարախոսական երիտասարդությանը, որը կտրել է իր բոլոր գաղափարական կապերը հայ ազգային (ազգայնական—Ա. Ո.) ինտելիգենցիայի հետ, որը այսօր հայտարարում է, թե նա ոչինչ չունի ժառանգած հայ ինտելիգենցիայի նախկին սերունդներից և ոչինչ չունի սովորելու նրանցից: Սուրենը Ռուսաստանի նոր համապետական կյանքի, ավելի հեռու, միջազգային կյանքի, միջավայրի ծնունդ է: Նրա ուսուցիչները չեն եղել և չէին էլ կարող լինել՝ Ստ. Նազարյան, Արթուրյան, Բաֆֆի, Քրիստ. Միքայելյան: Նրա հոգևոր հայրերն ու բուսուցիչները եղել են՝ Զերնիշևսկի, Բելինսկի, Պլեխանով և ապա Մարքս, Էնգելս, Կաուցկի»³ (ընդգծումները մերն են—Վ. Մ.):

Շահումյանի տված գնահատականից դժվար չէ հասկանալ, որ խոսքը ճշտիպի հեղափոխականի մասին է, հեղափոխական, որ և՛ իր քաղաքական գործունեությամբ և՛ իր գաղափարների լայնությամբ, ճշտ, պրոլետարական

¹ Արտաշես Ոսկերչյանի «Քննադատություն և հրապարակախոսություն, Երևան, 1968, էջ 222:

² Նույն տեղում, էջ 223:

³ Ստեփան Շահումյան, Գրականության մասին, Երևան, 1948, էջ 121:

հեղափոխության դարաշրջանում դուրս է եկել ազգային նեղ սահմաններից և դարձել ծնունդը սոցիալական-գաղափարական այն մեծ իրականություն, որի մեջ էր մտնում նաև Հայաստանը։ Որպես գաղափարական նոր սերնդի ներկայացուցիչ, Սպանդարյանը չէր կարող ժխտել ոչ հայ իրականությունը, ոչ էլ նրա մտավորականությունը։ Սակայն որպես մարքսիստ հեղափոխական նա ունեցել է իր հոգևոր հայրերը, իր ուսուցիչները։ Քնական է, որ նման եռգլոբ կապ նա չէր կարող ունենալ Շահումյանի թվարկած գրողների հետ։ Շահումյանի տված գնահատականում թվարկված են մարքսիստ Սպանդարյանի գաղափարական նախորդները. ճիշտ այնպես, ինչպես Լենինն է ռուս անկախ գրքում ցույց տվել ռուս սոցիալ-դեմոկրատների, այսպես ասած, տոհմագրությունը—Գերցեն, Բելինսկի, Չերնիշևսկի և 70-ական թվականների հեղափոխական փայլուն սերունդ։ Այդ, միայն այդ առումով կարող ենք ասել, որ ռուս սոցիալ-դեմոկրատների գաղափարական ուսուցիչներ չեն եղել և չէին կարող լինել Տուրգենևը, Տոլստոյը, Դոստոևսկին և շատ ուրիշներ։ Սպանդարյանի ուսուցիչների և ոչ ուսուցիչների անունները թվարկելով, Շահումյանը նպատակ չի ունեցել խաչ քաշելու վերջինների վրա, այլ ցույց է տվել գաղափարի այն սանձազերծը, ծրից այս կողմ սկսվում է մի նոր պայթույթ հին աշխարհի տապալելու, ժողովրդին փսկական ազատություն բերելու համար։ Ի դեպ, Շահումյանը այդպիսի մոտեցում է ցուցաբերել ոչ միայն Նազարյանի, Բաֆու և Արծրունու, այլև դեմոկրատ գրող Նազարու Աղայանի նկատմամբ։

Բայց տեսնենք, թե Ոսկերչյանը ինչպես է վարվել Շահումյանի գնահատականի հետ և ինչ «շտկումներ», «կոռուցումներ», «սրբագրումներ» է կատարել։ Նախ՝ Ոսկերչյանին չի բավարարել Շահումյանի այն պնդումը, թե Սուրենը կտրել է իր բոլոր գաղափարական կապերը հայ ազգային մտավորականության հետ (մենք արդեն տեսանք, թե ինչ առումով է ասել Շահումյանը) և փակագծերի մեջ ավելացրել է ազգայնական բառը, ցանկանալով ընկեր-ցողին հասկացնել, որ խոսքը ոչ թե հայ ազգային, այլ ազգայնական մտավորականության մասին է։ Երրորդ կողմից Շահումյանը, երկրորդ անգամ կրկնելով նույն պնդումը, հայտարարում է, թե գաղափարական նոր սերունդը ոչինչ չունի ժառանգած «նայ ինտելիգենցիայի նախկին սերունդներից»։ Ըստ Ոսկերչյանի մեկնաբանության, պետք է կարդալ «ազգայնական ինտելիգենցիայի նախկին սերունդներից»։ Այդ դեպքում ինչու՞ միայն նախկին։ Ժիշտն ասած վերավորական է մտածել անգամ, որ Շահումյանը, 1916 թ. չգիտեի ազգային և ազգայնականի տարբերությունը։ Եվ Ոսկերչյանը պետք է խմբագրեր նրան։ Ամբողջ գաղտնիքն այն է, որ Ոսկերչյանը կարիք է զգացել իր 30—40-ական թվականների արատավոր տեսակետները հաստատող «մարքսիստական» աղբյուրի և, այն չգտնելով, որոշել է հնարել։ Չէ՞ որ ազգայնականը ավելի հեշտ է մերժել, քան ազգայինը։ Ոսկերչյանի, ինչպես կասեք Նալբանդյանը, տկար կողմերն այն տեղումն են, ուր հեղինակը, դուրս գալով պատմական փաստերի սահմաններից, օգնություն է խնդրում երևակայությունից։

Բուրժուական լիբերալ ազգայնական համարելով Նազարյանին, Բաֆուն և Արծրունուն, Ոսկերչյանը հայտարարում է, թե «հակառակ նացիոնալիստական քննադատության մեջ հաստատված տրադիցիաներին՝ Սպանդարյանին տված իր բնութագրի մեջ առաջին անգամ Շահումյանը Արծրյանին ու Նալբանդյանին չի հիշատակում բուրժուական լիբերալիզմի սյուների շարքը»⁴։ Այդ դեպքում բանական մի հարց է առաջանում—իսկ ինչու՞ Սպանդարյանի ուսուցիչների շարքում չի հիշատակված Նալբանդյանի անունը։ Սակայն առավել տհաճը այն լիաբերան մեղադրանքներն են, որ նա շուրջում է ձգել ու աջ, «նացիոնալիստական քննադատության տրադիցիայի» կողմնակիցներ համարելով նրանց, ովքեր Նալբանդյանին ու Արծրյանին հի-

⁴ Արտաշես Ոսկերչյան, Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները, Երևան, 1962, էջ 195—196։

շատակել են նազարյանի, Բաֆֆու, Արծրունու կողքին: Նախ՝ խնդիրը թվարկումը չէ, այլ այն, թե ով է թվարկում և ինչ նպատակով: Երկրորդ, նախնադանի և Արծրունու մասին զեկուցումներ կարդացող առաջին հայ մարքսիստը Շահումյանն է եղել, նա է ժամանակի շակերտավոր ազատամիտներին «ուղղել իր ցասումնալից խոսքը, ասելով, «մի համարձակվեք նույնիսկ նախնադանի ու Արծրունու հաջորդներ անվանել ձեզ»: Նա է «ուժեղ ու տաղանդավոր անձնավորություններ համարել Արծրունուն ու Աղա-յանին, բարձր գնահատել Բաֆֆուն ու Շիրվանզադեին, առանց վախենալու կողք, կողքի թվարկել նրանց անունները: «Պրոլետար» թերթում հաշա-տուր Արովյանը, Ստեփանոս Նազարյանը և Գրիգոր Արծրունին համարվում են բուրժուական ազատամտական շարժման գլխավոր առաջադեմներ, շար-ժում, որը «ազգին նվիրեց շքեղ գրականության ու բանաստեղծության այն-պիսի ներկայացուցիչներ, ինչպիսին են Բաֆֆի, Պոռչյան, Շիրվանզադե, Պատկանյաև, Սմբատ Շահազիզ և այլ»⁵, Վերջապես կոմունիստ Ա. Կախիյա-նը կողքի կողքի թվարկում է Արծրունու, Բաֆֆու, Սոնդուկյանի անունները, որոնք. «զգում էին խորը, ատում էին ուժեղ, գործում էին շիտակ ու հաս-տատուն ուղղությամբ»⁶: Ոսկերչյանին հայտնի՝ են այս փաստերը: Այո, բայց ի՞նչ բացատրություն է նա տալիս: Շահումյանը, ասում է, երիտասարդ է եղել, սխալվել է Արծրունուն տված իր գնահատականում, Ա. Կախիյանը «ընկել է չափազանցության մեջ»: Իսկ Բոգդան Կնունյանցը, չէ՞ որ այդ տա-րիներին նա խոշոր տեսաբանի հռչակ ուներ և բարձր էր գնահատվում լենինի կողմից: Պարզվում է, որ «Կնունյանցն էլ է սխալվել»: «Բ. Կնունյանցի շա-րադրանքից կարելի է այն հետևությունը հանգել, — գրում է Ոսկերչյանը, — որ մաքսիստական սերունդը պետք է դառնա Գ. Արծրունու պրոգրեսիվ ուղ-ղության ժառանգորդը: Բայց դա սխալ է»⁷: Ի՞նչն է սխալ, նման հետևու-թյան հանգելը, թե՞ ժառանգորդ լինելը, պարզվում է, որ ժառանգորդ լինե-լը: Թե ինչու՞ չի կարելի ժառանգել Արծրունու և նրա խմբագրած «Մշակի» պրոգրեսիվ ուղղությունը, Ոսկերչյանը չի բացատրում: Միայն այն գիտենք, որ «մեր ընկերները տարվելով պոլեմիկայով՝ Արծրունու հաջորդների իրա-վացի բնահատկությամբ, որոշ հեղափոխում գեր: գնահատել են Գ. Արծրու-նու նշանակությունը»⁸: Այդ, «մեր ընկերները» Շահումյանն ու Կնունյանցն են:

Ստեփան Շահումյանը երբեք չի զբաղվել հայ դրականության, առհա-սարակ մշակույթի պատմության հատուկ ուսումնասիրությամբ: Բայց այն, ինչ նա ասել է կոնկրետ գրողների կապակցությամբ, կարևոր է և կարիք ունի գիտական լուրջ մեկնաբանությունների: Ստ. Շահումյանը ասել է, որ Նա-զարյանը Սպանդարյանի ուսուցիչը լինել չէր կարող և չի եղել: Այսքանը միայն: Եվ դա բավական է, որպեսզի Ոսկերչյանը Շահումյանի անունից մեր-ժեր լուսավորիչ դեմոկրատի ժառանգությունը. «Այստեղ («Մեր Սուրենը» ճառում—Վ. Մ.) Շահումյանը ժխտողական դիրք ունի նազարյանցի, Արծրու-նու և մյուս լիբերալների նկատմամբ»⁹: Ոսկերչյանը կարող է արդարանալ, մատնացույց անելով իր գրքի մի այլ էջը, որտեղ ասված է, թե «Նազար-յանցն ու Արծրունին էսթետիկայի ու գրականության, լեզվի ու կուլտուրայի մի շարք հարցերում կանգնած են եղել առաջադիմության դիրքերում»¹⁰: Բայց ի՞նչ արժեք ունի այդ «առաջադիմությունը», երբ 192-րդ էջում կար-դում ենք. «Երբ մեմբ հակադրում ենք նախնադանի սխալները կյանքը, նրա հեղափոխական-մարտական գործունեությունը հայ լիբերալիզմի սյու-նեի (իմա՝ նազարյանի, Բաֆֆու, Արծրունու, ուրիշ սյուներ չկան—Վ. Մ.)

⁵ Պրոլետար, 1902, № 1, էջ 8—9:

⁶ Պայքար, 1916, № 47:

⁷ Արտաշես Ոսկերչյան, նշվ. աշխ., էջ 430:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 45:

¹⁰ Նույն տեղում, էջ 113:

ողորմելի գործունեությամբ, ապա... եթե դրանք ողորմելի են, էլ ի՞նչ իմաստ կարող է ունենալ նրանց մասին ասված դրական խոսքը: Առհասարակ հակասական, իրարամերժ մտքերի, անտրամաբանական տրամաբանության նմուշները թիչ չեն Ոսկերչյանի գրածներում: Ոսկերչյանի «գիտական» ավերածությունների գլխավոր պատճառներից մեկն այն է, որ նա հաշվի է նրստում իր հնարած, այլ ոչ թե իրական փաստերի հետ, ու հաճախ այն տպավորությունն է ստանում, թե ինքը ավելի լավ է ճանաչում Նազարյանին, քան Նալբանդյանը: Մինչդեռ. թե՛ դրանք, — գրում է հեղափոխական-դեմոկրատը, — այդ տգեղները համարձակվում են բերան առնել գերապատիվ Նազարյանցի անունը: Ազգը երբեք չի կարող ուրանալ գերապատիվ Նազարյանցի աշխատությունը և անխաղախ դեպի ինքը սերը — նա (ազգը — Վ. Մ.) ուղիղ և պարզ մտքով կտեսնե՞ր այս շնաշխարհիկ և իմաստուն հեղինակի բնֆուշ սիրտը: Ազնիվ մարդուն ցանկալի է ընդհանուր օգուտը, բացառությունը՝ ընդհանուր անպիտան անդամն է: Ասված է լսելու համար»¹¹: Հայ մարդ-սիստական գրականագիտությունը վաղուց է լսել Նալբանդյանին, վստահել նրա կարծիքին և Նազարյանին դիտել որպես խավարամոլության, մտքերի լճացման, ստրկամտության դեմ պայքարողի, որպես մի պայծառ հայրենասերի, որը ընդվզել է շատ բաների դեմ, հուսալուծ, որ կգա լավ ժամանակ, երբ «աչքը ավելի պարզ կտեսնի նշմարությունը և սիրտը ավելի ուժգին կզգա բառին և գեղեցիկը: Ես կածում եմ՝ երախտագետ հետևորդները մեզ կզնաճախեն և մեզ վրա կնայեն զարմացած հայացքով, որպես հայրենյաց մահուր սիրո գովելի օրինակների վերա»¹²: Իր կանխատեսման մեջ Նազարյանը չի սխալվել: Այդ ժամանակը եկել է:

Ընթերցողին արդեն պետք է նկատած լինի, որ մենք անդրադառնում ենք Ոսկերչյանի՝ համեմատաբար «թեթև սխալներին», որոնք բավականին ծանր են մտքերի արատավորության, յուրահեռաբանի և տգիտության առումով: Մերժման արժանի նրա բոլոր լուրջ սխալները քննելու համար անհրաժեշտ կլինեն նորից շարադրել հայ հասարակական մտքի, ազգային-ազատագրական շարժումների, հայ գրականության XIX—XX դդ. առաջին երկու տասնամյակների պատմությունը: Բայց քանի որ Ոսկերչյանը ուրիշի ասածներին չի հավատում, իսկ իր սուտն էլ ճամփա չունի, ապա թող նրան մի վերջին անդամ փորձի համոզել Րաֆֆին, թե ով է ինքը և ում ուղղությունն է համարել նաև իրենը. «Ես Նալբանդյանի ուղղությանն եմ համակրում, իմ կարծիքով, միակ ուղիղ հանապաօրե նրա փառապան է»¹³:

Ամեն անգամ իր դատումների ակունքը Շահումյանի այս կամ այն ասույթը դարձնելով, Ոսկերչյանը չի էլ փորձում հասկանալ, թե գա ե՞րբ է ասվել, ի՞նչ նպատակ է հետապնդել և ո՞ւմ է հասցեագրվել: Թիկունքով դեպի անցյալը դառնալը և պատմության կնճռոտ հարցեր լուծելը, ներկայանալով որպես մարքսիստական տեսաբան՝ պատմության, գրականության, արվեստի, փիլիսոփայության, լեզվի և նույնիսկ երաժշտության ասպարեզներում, պետք է որ ավելի կնճռոտեին այդ հարցերը: Եվ կնճռոտել են: Մենք ցավալիորեն անարդարացի կլինենք, եթե Ոսկերչյանի «սխալները» վերագրեինք միայն նրա տգիտությանը, անգիտությանը և այլ կարգի շփոթություններին: Պատճառն ավելի խորն է: Կարդալով «Գրական թերթում» տպագրված նրա վերջին հոդվածը, մենք ցավով համոզվեցինք, որ իր լավատեսության մեջ սխալվել է գերմանացի գրող Մաքս Զրիշը, ասելով, թե «Զի կարելի արձակուրդ վերցնել ժամանակից», նա սխալվել է, մոռանալով, որ երբեմն այն, ինչ չեն կարող անել մեծերը, փոքրերին հեշտությամբ է հաջողվում: Ոսկերչյանը երկարաժամկետ արձակուրդ է վերցրել 1937-ին: 37-ից հետո նա երբեմն-երբեմն կամ հաճախակի, հիշել է, որ ինքը դեռ կա, ապրում է և հին անելիքներ ունի նոր պայմաններում: Դրանց մի մասին արդեն ծանոթա-

¹¹ Մի քաջ էլ Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953, էջ 478:

¹² Սա է փառս Նազարյան, Նամականի, Երևան, 1969, էջ 44:

¹³ Ղազարոս Ազատյան, Երկեր, Երևան, 1945, հ. 3, էջ 111:

ցանք: Ոսկերչանի՝ շատ բան չհասկանալու պատճառներից մեկը դա է, որի հետևանքով նա այդպես էլ չի կարողանում ըմբռնել արդեն գրականագիտական հայտնի ճշմարտություն դարձած այն միտքը, թե իրեն հաճախելու, ժամանակի մեջ իր վիճակը հասնականալու, պատմության ինչ-ինչ օրենքներ ըմբռնելու համար, հարկավոր է իրեն գտնել նաև անցյալում: Ոսկերչանը երբեք անցյալի մեջ իրեն գտնել չի կարող վերը նշված արձակուրդի պատճառով: Երկրորդ պատճառն այն է, որ նա իր առավելությունն է համարում 37-ից ժառանգած գաղափարական սխալները և նույնիսկ հպարտանում «առավել ևս ներկա գործունեությամբ, և հիմք ու պատճառ չունեմ ունենալու հրաժարվելու իմ անցյալից միայն այն բանի համար, որ այդ անցյալում եղել են սխալներ»¹⁴: Վերը մենք արդեն ժանոթացանք նրա «սխալների» որակին: Դրանք սխալներ չեն և չէին, այլ հանցանքներ, որոնց հավատարիմ մնալը, իրոք, ունենալու չէ պատմական ճշմարտության նկատմամբ: Ծշմարտությունը դեմ մեղանշած կլինեինք, եթե չնշեինք, որ Ոսկերչանը երբեմն գիտակցում է իր այս կամ այն սխալը, բայց այն շտկելու կամ ընդունելու փոխարեն նահանջում է՝ նոր անհեթեթություններ ավելացնելով հենքին: «Մենք չենք կարող բուրժուական սահմանափակ պրոգրեսիվության ժառանգորդ լինել (խոսքը նազարյանի, Րաֆֆու, Արծրունու մասին է—Վ. Մ.), որովհետև «մարդկության պատմության մեջ քիչ չեն առաջադիմական գործեր ու գործիչներ, բայց խորհրդային մարդիկ ամեն մի առաջադիմականություն ժառանգել չեն կարող... քրիստոնեությունը վաղ շրջանում ունեցել է պրոգրեսիվ նշանակություն, դա դեռ չի նշանակում, որ մենք պետք է քրիստոնեական ուսմունք ժառանգենք կամ ֆեոդալական երկատվածության համեմատությամբ կենտրոնացված միապետական իշխանությունը, ինչպես ասել է էնգելսը, խոշոր պրոգրեսիվ պատմական երևույթ է, սակայն դա բնավ հիմք չի տալիս լինել միապետականության կողմնակից և նրա ժառանգորդը դառնալ»¹⁵: Դժվար չէ նկատել, որ Ոսկերչանը չի կարողանում տարբերություն տեսնել դարաշրջանի և նրա մտածողների, միապետության և լուսավոր մտքերի, ստրկատիրության և Սպարտակի միջև, բայց հանդգնել է կես դար խոսել ոչ մի դարի մասին մարքսիստական պատկերացում չունենալու դեպքում: Այսպիսին են Ոսկերչանի «հպարտ» անցյալն ու ներկան:

Խոսելով այն մասին, որ Գերցենի՝ դեմոկրատիզմի ու լիբերալիզմի տատանումների միջև դեմոկրատն այնուամենայնիվ գերակշռում էր նրա մեջ՝ չեն ինքը նրա դեմոկրատիզմը վկայող փաստաթղթից մեկը համարել է հետևյալը. «Երբ լուր ստացվեց, որ մի ճորտ գյուղացի սպանել է կալվածատիրոջը՝ հարսնացուի պատվի դեմ ոտնձգություն կատարելու համար, Գերցենը ավելացրեց. «Եվ շատ լավ արեց»: Իսկ երբ Արևմտյան Հայաստանում մի ամբողջ ժողովուրդ էին մորթում, մի ամբողջ հնամենի ազգի պատիվն էին սրի քաշում թուրքերը, ազգ ու անուն մոռացած մարդուկները հայ գրողներին մեղադրում էին նացիոնալիզմի մեջ, որոնք ազատագրական պայքարի էին կոչել ժողովրդին: Դժվար է որոշել այդ սրբապղծության՝ յաթաղանի առաջ այդ ծնկադրոջ հումանիզմի խորությունը, ամոթալիությունը. նույնպես:

Եթե Ոսկերչանի՝ մեղմ ասած, «սխալները» նրա երիտասարդ օրերի ոգեշունչ անգիտության կամ հասուն տարիների տգիտության հետևանք լինեին, և ուրիշ ոչ մեկը նման արատավոր հայացքներ արտահայտած չլիներ հայ մշակույթի և նրա մի շարք երախտավորների մասին, երբեք նրա գրածներով չէինք զբաղվի: Երբ մարդ մենակ է իր սխալներում, վաղ թե ուշ խելքի է գալիս: Ոսկերչանի պարագան այլ է. նա ոչ թե իրենից դուրս գտնվող ինչ-որ իշխող ոգու, ինչ-որ աներևույթ հանգամանքների զոհ է, այլ այդ ամենը իր ներսում է: Դժբախտաբար նա այդպիսի «ներս» ունեցող ազգեցիկ համախոհներ էլ է ունեցել: Դրանցից մեկի՝ 30-ական թվականներին գրած հոդ-

¹⁴ Արտաշես Ոսկերչան, Քննդատություն և հրապարակախոսություն, էջ 191: էջ 191:

¹⁵ Նույն տեղում, էջ 170:

վածում հանդիպում ենք¹⁶ «Զոոլոգիական թրթռայացություն, անասնական շովինիզմ, նացիոնալիստական կոնցեպցիա» որակումներին: Անգամ կարդալուց հետո ես դժվարանում հավատալ, որ այդ ամենը ասված է Բակունցի «Ծիրանի փողը» պատմվածքի հերոս, Սասունցի Հազրոյի այն մտորումների կապակցությամբ, թե մեր սահմանը նեղ է, շնորհիվ սահմանի նեղության ժողովուրդը կենդիվի, մեր հողերի սահմանը դեռ քար է, ժողովրդի նեղությունը քարից է», մի նեղություն, որ մինչև հիմա էլ շարունակվում է, կորսված հողի մի կարոտ, որ մինչև հիմա էլ այրում է հային: Եվ ահա մարդկային ամենախորունկ ազգային այդ զգացումը համարվել է «գրպարտություն խորհրդային գյուղացու հասցեին», որովհետև «Հազրոյի» սահմանների լայնացման հույսը իր՝ Բակունցի սեփական հույսն է: Հագրոն իր ունեւոր կյանքի նախապարհին կարիք չուներ աչք տնկելու հաբեաճի հողին: Դրանով «Բակունցը փորձում է հայ աշխատավորությանը գրգռել իր հարևանների դեմ, բացարձակ կոչ անելով դեպի Մարութա սարը»¹⁷: Այս տողերում մտքի քրտնալեռներին մերկություն բացահայտված է այն, ինչ «կիսաբերան» ասել է Ոսկերչյանը: Վերջապես իմացանք, որ Բակունցի և Պատկանյանի «գոռոգիական ճաշակովի» հաբեաճի հողին աչք տնկել է նախնային: Արևմտյան Հայաստանը՝ ուրիշի հող, Մարութուկը՝ ուրիշի սար, հայրենիքի կարոտը՝ շովինիզմ, նրա ազատության համար պայքարը՝ իմպերիալիստական ձգտում: Ահա այն զաղափարական մղձավանջը, որ երկար տարիներ ծանրացած էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների և դրանց երգիչների ժառանգության վրա:

Եվ ի՞նչն է տարիմաստ: Այդ երկու հեղինակներն էլ ծնվել են Արևմտյան Հայաստանում: Մեկը (Ոսկերչյանը) Կարս է կորցրել, մյուսը (Ն. Զարյանը)՝ Վան: Երկուսն էլ թուրքական յաթաղանից հրաշքով փրկվածներ են: Դժվարանում եմ բացատրել հարազատ ժողովրդի դահճի նկատմամբ այդ ստորակմիտ գթության իմաստը: Ավելին, նացիոնալիզմի սպառնալիքը շատ դեպքերում արգելել է լիաբերան խոսք ասելու նաև Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի, Զարենցի, Բակունցի, Վարուժանի, Սիամանթոյի և շատ ուրիշների մասին:

Կատարվել է քաղաքական եռադարձի մի խարդախություն, որ այսօր ավելի պարզ է երևում, քան խառն ու պղտոր այն տարիներին: Զեմ կարող ստույգ ասել, թե ով է առաջինը «հայկական կուսակցությունները գլխովին հետադիմական» որակել, ապա նրանց համարել «ազգային կոիվների հրահրողներ», իսկ այդ կոիվի երգիչներին՝ նրանց նախորդներ, և բոլորին ու ամեն ինչ խաչ հանել: Բայց իրողությունը սա է՝ տխուր և վերավորական. երկի պատմաբաններին է վիճակված պաշտպանելու մեր անցյալի քաղաքական պատիվը, փրկելու այն ամենը, ինչ ժողովրդինն է: Բայց ի՞նչն է մեզ նաև խորապես դառնացնում: Այն ժամանակ, երբ Բուլղարիայի քննադատական միտքը թուրքերի դեմ ազատագրական պայքարի գրականությունը ոչ միայն ազգային հպարտության արժանի երևույթ էր համարում, այլև կարևոր ներդրում համաշխարհային գեղարվեստական գրականության ասպարեզում, երբ բուլղարները պայքարի զենք էին դարձրել նաև Բաֆֆու, Պատկանյանի, և շատ ուրիշների երկերը, վերջապես, երբ հայ ժողովրդի ազատագրական պայքարը ոգևորում էր նաև նրանց, հայրենասիրության օրինակ ծառայում, հայ իրականության մեջ նույնիսկ հիմա են փորձում դրանք հետադիմության, աննպատակ վրիժառության, ժամանակավրեպ երեվույթներ դիտել: Պատմության մեջ երկի չկա ուրիշ որևէ ազգային-ազատագրության պայքար, որ տրոհված լինի այդքան «իզմերի», այդքան անաստվածորեն խոշտանգված լինի նրա երգիչների հիշատակը: Նշելով, որ Նիկոլ Աղբալյանը «երկար տարիներ եղել է դաշնակցական կուսակցության ղեկա-

¹⁶ Ն. Զարյան, *Նացիոնալիստը խորհրդային գրողի դիմակի տակ* (Գրական թերթ, 25. V. 1936),

¹⁷ Նույն տեղում:

վար գործիչներից մեկը», ակադ. էգ. Ջրբաշյանը գրում է, որ չպետք է անտեսել այն իրողությունը, որ իբրև բանասեր նա որոշակի ավանդ ունի հայ գրականության և լեզվի ուսումնասիրության մեջ, իսկ որպես քննադատ մինչև հեղափոխությունը տվել է մի շարք գրողների երկերի նուրբ ու հետաքրքիր գնահատականներ¹⁸։

Բավականին զգուշավոր այս կարծիքն արտահայտվել է ուղիղ 10 տարի առաջ, երբ շարունակվում էր մտքերի լճացման պրոցեսը, և անցյալի սխալների մղձավանջը դեռևս թույլ չէր տալիս գնահատել գրական ժառանգությունն այն մտավորականների, որոնք ճակատագրի բերումով տարագրվել են արտասահման, եղել են ոչ միայն գրականագետներ ու գրողներ, այլև զբաղվել են քաղաքականությամբ։ էդ. Ջրբաշյանը առաջինն է փորձել քաղաքականության հետևում տեսնել ու գնահատել նաև Աղբալյան քննադատին, մի փորձ, որ այսօր արդեն դարձել է պետական կառնադաշտում ունեցող անհրաժեշտություն, շատերին փրկելով անարդար մոռացումից։ Արտ. Ոսկերչյանը նաև Աղբալյանի կյանքի ու գործի գնահատման հարցում է հավատարիմ իր, մենք կասեինք, պնդաճակատ սկզբունքին։ Նրան ռանդայած բնավորություններ են պետք. մտքի, զգացումի ոչ մի ոլորան չունեցող գրող ու քննադատ։ Բարդության փոխարեն հարթությունն է նրան ձեռնտու, որովհետև բարդության մեջ դժվար է նկատել այն, ինչ մնայուն է, ինչ հարկավոր է նաև ապագային։ Տգիտությունը այդպիսի որոնող հայացքի կարիք չունի, որովհետև նա դատապարտված է տեսնելու այն, ինչ տեսնում է։ Աղբալյանի մասին հանգամանալից խոսք սասելը դուրս է մեր նպատակից։ Բայց վերջնալից քննադատի քննադատի հոգևոր կենսագրության մի շարք կարևոր փաստերի հրապարակումից առաջ անդրադառնալ Ոսկերչյանի որոշ դատումներին, որ նա կատարել է Վսեկ ճշմարտությունը սա է» իր մթախոսությունում։ Ժամանակին երիտասարդ Իսահակյանը (1904) Թումանյանին հասցեագրած մի նամակում մտերմիկ տոնով այն միտքն է արտահայտել, թե «նիկողից նամակ ունեմ, էն էլ աստվածապաշտ է դառել, միստիկ... երևում է Յ. Մ. Սոլովյեբ-ի, ուսն այդ կրոնական-բարոյական փրկիստփայի խիստ ազդեցություններ¹⁹։ Եվ այսքանը Ոսկերչյանին բավական է եղել Աղբալյանի ռեակցիոնությունը ընդգծելու համար։ Այդ օրվանից անցել է 85 տարի։ Վլադիմիր Սոլովյովին, ուսական մտքի մեծ երախտավորին, չեն հասկացել նույնիսկ հուշակավոր գիտնականներ, նրա անունը մինչև վերջերս պատած է եղել կեղծիքի, ամբաստանության հաստ շերտով։ Հրապարակայնության հիշողությունը արդեն նաև նրան է ֆրիկել մոռացումից։ Լույս է տեսել նրա փրկիստփայական երկերի երկհատորյակը, պատրաստվում է ակադեմիականի հրատարակումը։ Ոսկերչյանը այդ մասին կարող էր տեղեկություն չունենալ, բայց չէր կարող կարդացած չլինել իր հոգվածի գրությունից մեկ ամիս առաջ «Սովետական կուլտուրա»-ում տպագրած Սոլովյովի հետևյալ տողերը. «Ժողովուրդը դրական ուժ է, և ամեն մի ժողովուրդ (ուրիշ ժողովուրդից) անկախ գոյություն ունենալու և իր ազգային հատկությունները ազատ զարգացնելու իրավունք ունի», ապա նաև ցասումնալից խոսքը նրանց դեմ, ովքեր համառորեն պնդում են, թե «Ռուսաստանում ուրիշ լեզուներ գոյություն չունեն ուսաց լեզվից բացի, թե ամբողջ այդ հարստությունը (ուրիշ լեզուների—Վ. Մ.) պետք է ոչնչացվի և հասցվի միօրինակության ու աղքատության, թե բոլոր այդ բազմաթիվ ազգերը պետք է դիմազրկվեն և վերածվեն անդեմ մի զանգվածի»²⁰։ Ոսկերչյանը կարդացել է, բայց նրան, համոզված եմ, այդ տողերը չէին կարող ոգևորել, որովհետև Աղբալյանը նույնպես պայքարել է հայ ժողովուրդի և նրա լեզվի անկախ գոյության ու զարգացման համար։ Ոսկերչյանին միայն միստիկն էր պետք, և նա գտավ իր որոնածը ոչ թե Սոլովյովի գրքերում, այլ Իսահակյանի նամակում, երբ դեռևս ոչ ոքի հայտնի չէր, թե

¹⁸ Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Երևան, 1979, էջ 163.

¹⁹ Ավետիք Իսահակյան, Երկեր, հ. 6, Երևան, 1979, էջ 45.

²⁰ Советская культура, 8. IV. 1989.

ինչ էլ գրել Աղբալյանը, հոգեկան ինչ ծանր ապրումներ է վստահել իր գրչակից ընկերոջը: Ծնեք մեկնելով՝ Վլ. Սոլովյովին, մենք մի ուրիշ, թերևս առավել կարևոր նպատակ ենք հետապնդել, ցույց տալ, թե ազգային հայրտույթան, լեզվի ու մշակույթի նկատմամբ քաղաքակիրթ հարգանքի ինչպիսի դասեր կարելի է քաղել ոուս մտածողից և ինչպես պետք է սիրել հայրենիքը նրա և՛ ուրախության, և՛ ողբերգության պահերին: Դժբախտաբար Ոսկերչյանը սիրում է շռայլորեն գաղափարական դասեր տալ բոլորին, հատկապես հայ դասականներին, առանց որևէ մեկից դասեր առնելու, որովհետև սարսափում է ազդվելով ղրկվել իր ինքնուրույնությունից: Մինչդեռ նաև Սոլովյովը կարող էր օգնել նրան գոնե գիտակցել (հրաժարվել չի կարող) իր ինքնությունը արատավորությունը և նացիոնալիզմ չորոնել Զարենցի նույնիսկ վշտի մեջ: «Սխալվում են նրանք, — հոխորտում է Ոսկերչյանը, — ովքեր գրտնում են, թե ազգային դժբախտ ճակատագիրը կամ «նախրյան վիշտը» դառնում է Զարենցի ստեղծագործության տարրերի էությունը: Մինչդեռ նա «ոչ միայն ազատագրվել է նախրյան վշտից», այսինքն, հայկական նացիոնալիզմից»²¹: Ստիպված ենք հիշեցնել, որ նախրյան հրով վառված, նախրյան պոետ է եղել Զարենցը: Նա մեծ լինել չէր կարող, եթե դավաճանած լիներ իր ժողովրդի ոչ թե սովորական, այլ արյունածոր վերքերին: Հայի նաև վիշտը նացիոնալիզմ համարելը Արտ. Ոսկերչյանի, այդ անվրդով «37-ականի» զառանցանքն է: Իր ազգը սիրողը միայն կարող է հասկանալ ուրիշ ժողովրդի ազգային մեծ վիշտը, նրա վերավոր ճակատագիրը: Իր մեղադրանքների շարանը արձակելուց հետո (Աղբալյանի ժառանգությունը խորապես ունակ-ցիոն է, նացիոնալիստական, հակահեղափոխական), Ոսկերչյանը խոսքը տալիս է փաստերին: Այդ փաստերն արդեն ոչ միայն հայտնի, այլև գիտակա-նորեն հերքված են մի շարք հոգվածներում և հատկապես Գ. Անանյանի «Նիկոլ Աղբալյանը քննադատ» (1989) ուշագրավ գրքում: Այժմ խոսքը տանք մեր իմացած փաստերին: Ինչպես հայտնի է, Նիկոլ Աղբալյանը արգելված է եղել ոչ թե գրական-քննադատական ժառանգության, այլ գլխավորապես քաղաքական գործունեության համար: Եվ քանի որ այս վերջինը Ոսկերչյանը համարում է մտավորականի գնահատման միակ չափանիշը, ապա կուզենա-լինք նախ անդրադառնալ Աղբալյանի կյանքի վերջին տարիների հենց այդ «միակերպ»:

Զի կարելի մարդուն մեկընդմիջտ սխալված և ապա՝ ավարտված հա-մարել նրա կյանքը: Եղել են և էան այնպիսի դեպքեր, երբ երեկվա սխալ-վողը, հայրենիքից տարագրվածը այսօր կամ վաղը խղճի հարվածների տակ և պատմության ճշմարտության գիտակցությամբ հայացքի պայծառություն է ունենում ավելի խորն ապրելով հայրենիքի կարոտը: Այդպիսի մի անհա-տակաություն էր նաև Նիկոլ Աղբալյանը: Նրա, որպես քննադատի, կեն-սագրության սկիզբը փայլուն ապագա էր խոստանում: Իսահակյանի, Տեր-յանի, Զարենցի և Զորյանի առաջին քայլերից նա կարողացավ կռահել, որ հայ գրականությունն են գալիս այնպիսի տաղանդներ, որ վաղը դառնալու են հայ ժողովրդի փառքն ու պատիվը: Ուրիշների առաջին քայլերը ճշմարիտ գնահատողի ճակատագիրը, սակայն, չունեցավ այն ընթացքը, որ կուզենար ինքը: Հայ ժողովրդի մեծ ողբերգություն, ազատագրական պայքարի դաժան տարիներ, Հայաստանի Հանրապետության ստեղծում, նոյեմբերյան վերա-ծնունդ, տարագրություն և երկրորդ համաշխարհային պատերազմ: Պատե-րազմի տարիներին ինչպիսի՞ դիրքորոշում ունեւ Աղբալյանը, ո՞ւմ էր աղո-թում և ո՞ւմ անիծում, ո՞ւմ կողմն էր նրա հավատը:

1985 թ. «Արարատ» թերթից (մայիսի 12) տեղեկանում ենք, որ Հովհ. Պուճիկյանը 1942-ին հանդիպել է Նիկոլ Աղբալյանին. «Զրույցի ժամանակ ինչ-որ մեկը ներս է մտնում, թերթերի մի կապոց դնում սեղանին ու հեռա-նում: Աղբալյանի աչքին է ընկնում «հայկական թերթ մը», որը խոշոր տա-ռերով կը ծանուցեր... Կարմիր բանակը քայքայված, գերմանական բանակ-

²¹ Ոսկերչյանի զրպարտագիրը՝ վերը հիշատակված գիտական համատեղ նիստի քննարկ-ման նյութերից:

ները Մոսկվայի դռներուն առջև։ Նկատեցի Աղբալյանի մորուքին ղողլողը։ Համարձակվեցա հարցնել, թե ի՞նչ է։ Ահա Աղբալյանի պատասխանը. — Ոչինչ... Եթե Գերմանիան հաղթի՝ Հայաստան ոչ ևս է։ Բայց Կարմիր բանակը պիտի հաղթի, մեր Հայաստանը պիտի հաղթանակի։ Խելագարվածներ են ամեն անոնք, որոնք կուզեն Գերմանիայի հաղթանակը և առանց ամչնալու կը պատրաստվին նացիզմի հաղթանակը տոնելու։ Հայտ առյուծ չկա նրանց երակներուն մեջ։ Ափսոս, ափսոս, եթե Գերմանիան հաղթի ոչ ևս է Հայաստանը և հայությունը։ Ես կը հավատամ, որ Կարմիր բանակը պիտի հաղթե և անոր հետ հաղթական դուրս պիտի դա նաև մեր հայությունը և պիտի բարգավաճի։ Եվ այս անկեղծ համոզմունքն արտահայտելուց հետո «միստիկ» և «նացիոնալիստ» Աղբալյանը առաջարկում է գավաթ բարձրացնել Հայաստանի և Կարմիր բանակի ապագա հաղթանակի կենացը։ Դժվար է ստույգ ասել, թե դրանից առաջ ինչպիսի խոհեր ու ապրումներ է ունեցել Աղբալյանը, ինչպես և ինչու է վիճել ուրիշների և իր անցյալի հետ, ինչ համոզմունքներից է լռելյայն հրաժարվել։ Բայց որ այդ պրոցեսը եղել է, կասկածից վեր է։ Ասենք նաև, որ եթե այդ պայծառացումը տեղի ունենար 1945-ին, երևի այդպիսի արժեք ու կարևորություն չստանար։ 1942-ին է եղել, մի դժգոհ տարեթիվ, երբ պատերազմի՝ անգամ ամենափորձված մասնագետներից շատերն անկեղծորեն ցավում կամ էլ օր առաջ տոնում էին խորհրդային Միության պարտությունը։

Չորս տարի անց Նիկոլ Աղբալյանը հոգված է գրում Իսահակյանի մասին. «Հայոց լեզուն կարող է փոխվել, բայց Իսահակյանի լավագույն երգերը կը մնան և կը խոսին հայ սրտերեն, ինչպես Քուչակը կամ Սայաթ-Նովան»²²։ Դա ինչ-որ տեղ մաքուր խղճի խոստովանություն էր։ Ցավալիորեն ընդհատված սիրուն վերադառնալու անկեղծ ձայն, որի մեջ դառն ափսոսանքի շեշտ կա այդքան ուշացումով իր հոգևոր աշխարհի խոստովանված սկզբին վերադառնալու կապակցությամբ. «Հիմա նա հայրենիքի մեջ է, որ վերաշինվում է, իր շուրջն աճում է հավատավոր և թարմ մի սերունդ, որ սիրում ու գնահատում է նրան, իր շուրջն է նաև հայոց ժողովուրդը, որ սնված է նրա երգերով, իսկ հիմա կարող է նաև կարգալ նրա գիրքը... Նրան հովանի կանգնած է հայոց պետությունը... Անկասկած ամոքում են իր վիշտը մի կողմից տարիքը, մյուս կողմից հայրենիքի ներկան և մանավանդ նրա փայլուն ապագան»։ Մարքսիստական գրականագիտությունը չի կարող անտեսել նմանօրինակ մտորումները, որոնք այս կամ այն գրողի, մտածողի դժգոհ ճակատագրի ինչ-որ լուսավոր կողմեր են երևան հանում։ Իսկ հիմա առավել ևս, երբ մեր հետադարձ հայացքը դարձել է ավելի մարդասեր և առավել ոչ թե հանդուրժող, այլ արդարամիտ, ամբողջ ճշմարտությունը իր լույսով ու ստվերով պատմության ընթացքի մեջ դիտելու նոր հայացք ու մտածողություն։ Բայց դառնանք Աղբալյանի հոգվածի ավարտին. «Խոսքիս վերջում թույլ տվեք (սա հոբելյանական ճառ է եղել—Վ. Մ.) մի անձնական տենչանք արտահայտեմ, որ հուսամ թե նաև ձերը լինի. կուզենայի, որ հիմա գարուն լիներ, ապրիլ և մենք նստած լինեինք Ավ. Իսահակյանի հայրենի գյուղում, Ախուրյանի ափին... Լինեինք Ծրեանի Հրազդանի ափին (այս գետը մերն է ծայրածայր)... Լինեինք Ծրեանի թունդ գինին, զուռնային Ավ. Իսահակյանի երգերից մեկը նվագել... Լցնեինք բաժակներն ու կանչեինք.

— Ավո ջան, քո կենացը, շատ ապրես հայոց աղգի համար, երգդ անսպառ, հասար մուրազիդ»²³։

Այդ ելույթում խոսվում է նաև ուրիշ երազների մասին, որ նաև Բաֆֆու, շատերի երազանքներն են, որոնք նույնպես պիտի իրականանան։ Այժմ, հատկապես հրապարակայնության այս դարում ակտիվ գործունեություն են ծա-

²² Աղբալյան, 1946, էջ 170—171։

²³ Նույն տեղում։

լիակել մեր հիշողության ռեզերվները նաև անցյալի ուսումնասիրության բնագավառում: Ուսումնասիրվում է դասեր առնելու և հաջողություններից, և սխալներից: Ամեն ինչ քննության է առնվում, բայց ոչ ամեն ինչ ընդունելու կամ ժխտելու նպատակով: Կան եղելություններ, որոնցով հպարտանում ենք, բայց կան նաև այնպիսիք, որ չէինք ցանկանա նորից ապրել: Ձի կառելի գրողի նախադասի այս կամ այն բեկվածությունը տարածել նրա ամբողջ գործունեության վրա, խնչսլես նաև ամառողկային է նրա կյանքի ողբերգական լքերով վաղաքստել այն լավը, որ նա ստեղծել է:

Մի առիթով Միմոն Վրացյանը խոստովանել է, թե Աղբալյանը ստեղծված չէր Սփյուռքի համար: Նրա տեղը Հայաստանն էր, մայր երկիրն ու ժողովուրդը: Վերջին վկայությունը մեզ մտաբերել տվեց Ավետիք Իսահակյանի այն խոստովանությունը, թե «ինքը և Աղբալյանը ծնված չէին քաղաքագետ դառնալու համար: Քաղաքականությունն ինքը բռնեց մեր փեշից: Դա մեր բանը չէր, բայց դարձավ: Մեր ողջ ժողովուրդի ճակատագիրն էր պոլիտիկ դարձել—դրանից դուրս ոչ ապրել կլինեիր, ոչ էլ մանավանդ մեռնել»: Նաև այսպես են խոսում փաստերը՝ համառ, ճշմարիտ:

Ամփոփենք: Ով դժբախտություն է ունեցել ծանոթանալ Ոսկերչյանի ծավալուն շարադրանքներին, պետք է ամեն աչքափռի նկատած լինի, որ մեր մշակութի անցած ճանապարհը՝ նարեկացուց մինչև Սևակ և հետո, ականապատված է «ազգայնականությամբ», «ժողովրդի թշնամիներով», ինտերնացիոնալիզմի ոտը դավաճանությամբ, ազգայնական կրքերը հրահրող երգերով, «նեպմանական երաժշտությամբ», «ռասսայական տեսությամբ», «ֆաշիզմի գաղափարական զինանոցից մեղքաբաժ հերյուրանքներով»: Այս որակումներից յուրաքանչյուրը խորհրդային դասաստանագրքում ուներ իր հոգվածը, որով մահվան էին դատապարտվել կամ աքսորվել հարյուրավոր մտավորականներ, հազարավոր երեխաների մատնել դաժան որբության: Եկել է արդար հատուցման ժամանակը: Այդ են պահանջում զոհվածների հիշատակը և ապրողների հիշողությունը:

ПО ПРАВУ ПАМЯТИ

В. М. МНАЦАКАНЯН

Р е з ю м е

В свете ленинской теории литературной критики на протяжении десятилетий доктор филологических наук Арташес Воскерчян организовывал травлю ряда передовых писателей и классиков литературы как Советской Армении, так и зарубежья, что способствовало запрету или уничтожению произведений этих писателей. И сегодня, в период духовной перестройки и гласности этот литературовед от прошлого продолжает свою профессиональную деятельность, рядясь в тогу плюрализма и выдавая фальсификации за мнение.

Гласность и демократия возвращают народу те ценности, которые принадлежат ему и являются неотъемлемой частью его духовного богатства. А. Воскерчян не в силах это воспринять. Давний апологет политизированного литературоведения фактически ничего не забыл и ничему не научился.

BY THE RIGHT OF THE MEMORY

V. M. MNATSAKIAN

S u m m a r y

In the light of the Leninist literary criticism for decades the doctor of philological sciences Artashes Voskerchian has been masterminding persecutions of progressive writers and classics of literature both of the Soviet Armenia and the Diaspora thus promoting either prohibition or destruction of the works by these authors. And today, in the period of spiritual restructuring and openness this literary expert of the past times continues his professional activity disguising himself in the vestments of pluralism and presenting forgeries as opinions.

Openness and democracy are giving back to the people the values that belong to them and are the unseverable part of their spiritual wealth. Voskerchian however is not in the position to perceive that. A long-time apologist of the politically-minded literary criticism has forgotten nothing and has learned nothing.